ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Հ/ 310 29.10.2019թ.

Ինֆորմացիայի ազատություն Կենտրոն ՀԿ
նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ մինչև ՀՀ կառավարության 27.03.2003թ. հ.1941-Ա որոշումով նախատեսված փոփոխությունների իրականացումը, Դալմայի այգիների ընդհանուր զբաղեցրած հողատարածքի մակերեսը կազմել է մոտ 520.0հա, որը տվյալ ժամանակահատվածում համարվել է համայնքային գյուղատնտեսական նպատակային նշանակության:

Վերը նշված հողամասը ՀՀ կառավարության 09.03.1994թ. հ.108 որոշման հիմքով, Շահումյանի շրջխորհրդի գործկոմի հետ կնքված օրինակելի պայմանագրերով, գյուղատնտեսական նշանակությամբ տնօրինելու պայմանով մասնատվել է և վարձակալությամբ տրամադրվել անհատ քաղաքացիների և իրավաբանական անձանց: Ներկայումս Դալմայի այգիների ընդհանուր զբաղեցրած հողատարածքի մակերեսը կազմում է 228.34հա, որը «Հայանտառ» տնտեսության հողն է:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ բարձրացված մյուս հարցադրումների մասով տեղեկատվության չենք տիրապետում: